

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՌՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐԱՅԻԿ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ  
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍ-  
ԳՐՔԻ 231.2. ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ 3-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԻ, ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 300 ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՌՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱԽԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

15 մայիսի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Ա. Բալայանի, Տ. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի,  
Զ. Ղուկասյանի, Ռ. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

նաև նախակցությամբ՝ դիմողների, դիմող Ա. Սաֆարյանի ներկայացուցիչ՝ Ռ. Սա-  
ֆարյանի, գործով որպես պարասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի  
պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի օրենսդրության վերլու-  
ծության վարչության պետք Ա.Խաչարյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ  
կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքի 25, 38 և 69 հոդվածների,

դրնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ  
Ա. Սաֆարյանի և Ռ. Դակոբյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատա-  
վարության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, ՀՀ քաղաքա-  
ցիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության  
Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Ա. Սաֆարյանի և Ռ. Դակոբյանի՝  
05.03.2007թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող և պարասխանող  
կողմերի ներկայացուցիչների գրավոր բացաբրությունները, հետազոտելով

վիճարկվող նորմերը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դադարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

**1.** Դիմելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կերի սահմանադրականության հարցով, դիմողները սահմանադրական դադարան են ներկայացրել Երեւանի Աջափնյակ եւ Դավթաշեն համայնքների առաջին արյանի դադարանի 2006թ. մարտի 24-ի, ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դադարանի 2006թ. մայիսի 3-ի վճիռները, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դադարանի քաղաքացիական պալատի 2007թ. հունվարի 31-ի՝ վերջնական դադարան ակտեր հանդիսացող որոշումները: Քաղաքացիներ Երանիկ Տակորյանի եւ Արայիկ Սաֆարյանի միջև 23.10.2003թ. կնքված գործարքը վավեր ճանաչելու մասին հայցն Աջափնյակ եւ Դավթաշեն համայնքների առաջին արյանի դադարանի վճռով մերժվելուց հետո, վերաքննիչ բողոքի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դադարանն այդ գործարքն որակելով որպես առուվաճառքի պայմանագիր, հերթեաբար, նաև նորարական վավերացման ենթակա (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 562 հոդված), կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կերի կանոնը, այն վավեր է ճանաչել: Վրյունքում, միաժամանակ ճանաչվել է Ե. Տակորյանի սեփականության իրավունքը Երեւան քաղաքի Բաշխնչաղյան փողոցի թիվ 184 շենքի հարեւանությամբ գրնվող, սույն գործով դիմողների սեփականությունը հանդիսացող առեւտրի սրահի համապատասխան մասի նկարմամբ: ՀՀ վճռաբեկ դադարանի քաղաքացիական պալատն իր՝ 31.01.2007թ. որոշումներով վերադարձրել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դադարանի վերոհիշյալ վճռի դեմ բերված վճռաբեկ բողոքները:

**2.** Դիմողները միաժամանակ վիճարկում են ՀՀ քաղաքացիական դադարակության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կերի 3-րդ ենթակերի դրույթների սահմանադրականությունը:

Նկատի ունենալով, որ ՀՀ քաղաքացիական դադարակության օրենսգրքի 231.2. հոդվածի սահմանադրականության վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դադարանի 2007 թվականի ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշումը, ուստի հիմք ընդունելով «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ մասի եւ 60 հոդվածի 1-ին մասի դրույթները, սույն գործի վարույթը՝ ՀՀ քաղաքացիական դադարակության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կերի 3-րդ ենթակերի սահմանադրականության մասով՝ ենթակա է կարճման:

**3.** ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, Նայասրանի Նանրապետության Նախագահի կողմից սպորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածը սահմանում է.

«Հոդված 300. Գործարքի նորարական ձեւը չպահպանելու հետեւանքները

1. Գործարքի նորարական ձեւը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

2. Եթե կողմերից մեկը լրիվ կամ մասնակի կարգարել է նորարական վավերացում պահանջող գործարքը, իսկ մյուս կողմը խուսափում է գործարքի նորարական վավերացումից, դաբարանն իրավունք ունի գործարքը կարգադ կողմի պահանջով այն վավեր ճանաչել: Այդ դեպքում գործարքի հետագա նորարական վավերացում չի պահանջվում:

3. Գործարքի նորարական վավերացումից անհիմն խուսափող կողմը պետք է մյուս կողմին հարուցի գործարքը կնքելու ուշացման հետ կապված վնասները»:

Դիմող կողմը գիտում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոհիշյալ հոդվածի 2-րդ կետի դրույթները չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 3 հոդվածին, 8 հոդվածի 1-ին մասին, 31 հոդվածի 1-ին և 2-րդ մասերին:

Դիմող Ա. Սաֆարյանի ներկայացուցիչ Ռ. Սաֆարյանը, մինչեւ սույն գործով դաբաքնությունն սկսվելը, «Սահմանադրական դաբարանի մասին» ՀՀ օրենքի 47 հոդվածի համաձայն միջնորդել է նաև քննել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289 հոդվածի սահմանադրականության հարցը:

Այդ հոդվածը սահմանում է.

«Հոդված 289. Գործարքի հասկացությունը

Գործարքները քաղաքացիների եւ իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ եւ պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն»:

Դիմողը գիտում է, որ անորոշ ձեւակերպման հետեւանքով վերոհիշյալ հոդվածի դրույթները չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի 2-րդ մասին:

Դիմողներն իրենց դիրքորոշումը պարճառաբանում են հետեւյալ փաստարկներով.

ա/ քաղաքացիական իրավունքի ընդհանուր սկզբունքներից են հանդիսանում կողմերի իրավահավասարությունը և քաղաքացիական գործարք կնքելու կամավորությունը: Գործարքն ունի կարարման մի շարք փուլեր: Նորարական վավերացում պահանջող գործարքի կարարման փուլերից մեկն է հանդիսանում է նորարական գործողությունների կարարմանը մասնակցելը: Գործարք կնքելու կամավորության սկզբունքից բխում է նաև գործարքի կնքումից հետագայում ցանկացած պարճառով հրաժարվելը, այդ թվում՝ նորարական գործողությունների կարարմանը չմասնակցելը: Նման պայմաններում օրենքը հնարավորություն է դալիս դարձանին գործարքը ճանաչել վավեր, ինչը չի բխում իրավահավասարության և կամավորության՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված սկզբունքներից, որոնք գերակայություն ունեն օրենսգրքի մյուս սկզբունքների նկարմամբ: Այդ պայմաններում գործարքը վավեր ճանաչելը կարող է մյուս կողմին հարկադրաբար սեփականությունից զրկելու (այդ թվում նաև՝ համասեփականարկիրոջը) հետեւանք առաջացնել:

թ/ ՀՀ Սահմանադրության 43 հոդվածը սեփականության իրավունքը չի դիմում որպես այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող իրավունք, առկա է իրավունքների սահմանափակման այն առանձնահատուկ դեպքը, երբ Սահմանադրությունն է որոշում դպյալ իրավունքի սահմանափակման չափանիշն ու սահմանները՝ չվերապահելով այն նույնիսկ օրենսդրի իրավասությանը: Այդպիսի սահմանափակում կարող է դեղի ունենալ օրենքով նախադրեսված դեպքերում՝ բացառապես դարձական կարգով սեփականությունից զրկելու միջոցով՝ որպես պարագանարկությունից բխող հարկադիր գործողություն: Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող դրույթներն իրավախափման կամ պայմանագրային պարտավորության չփառարման դեպքերի բացակայության պայմաններում անհիմն կերպով հնարավորություն են ընձեռում դիմարկելու անձին սեփականությունից զրկելը նաև որպես պարագանարկությունից չքխող հարկադիր գործողություն: Իրավական անորոշության հետեւանքով չի երաշխավորվում գույքի նկարմամբ համասեփականարկերի իրավունքի պաշտպանությունը, հնարավորություն ընձեռելով դարձական կարգով անձի վրա դնելու՝ Սահմանադրությամբ չսահմանված պարտականություններ:

**4. Առարկելով դիմող կողմի պնդումների դեմ, պարագանարկությունը կողմը գրնում է, որ վիճարկվող նորմը համապարասիանում է ՀՀ Սահմանադրությանը: Ըստ պարագանողի՝ օրենսդիրը նորարական վավերացումը չի ճանաչում որպես գործարքի կարարման, պայմանագրի կնքման փուլերից մեկը: Նորարական այդ**

գործողությամբ սոսկ վավերացվում է պայմանագիրն սպորազրողների ինքնությունը, պայմանագրի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված վավերապայմաններին համապատասխանությունը: Օրենսդիրը պայմանագրի կարարումից միակողմանի հրաժարում թույլափրում է միայն օրենքով կամ դվյալ պայմանագրով այդպիսի իրավունք նախադրեսելու դեպքում: Պարասխանող կողմը գրնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող դրույթի շրջանակում պայմանագրը դիմողը կնքել է ինքնուրույն, առանց որեւէ հարկադրանքի, հետեւաբար, դրանով իսկ իրացրել իր՝ որպես սեփականագիրոց իրավազորությունն իր հայեցողությամբ դիրապետելու, օգտագործելու, գնորինելու եւ կրակելու իր սեփականությունը, ուստի սեփականության իրավունքից զրկման մասին խոսք լինել չի կարող: Ընդունելի չեն դիմողի բերած պարճառաբանությունը համասեփականագիրոց համաձայնության պարզադիր լինելու վերաբերյալ:

Ըստ պարասխանող կողմի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող նորմի վերլուծությունը՝ ՀՀ Սահմանադրության 18, 19, 91 եւ 94 հոդվածների համարեքսպում վկայում է, որ օրենսդիրը դադարանին ընձեռել է որոշում կայացնելու դիսպոզիտիվ հնարավորություն, ինչը պայմանավորված է վիճարկվող նորմի բնույթով, այսինքն՝ դադարանը յուրաքանչյուր գործով պետք է գնահատի գործի բոլոր հանգամանքները, համադրելով ինչպես օրենսգրքի նորմերի պահանջները, այնպես էլ քաղաքացիական իրավունքի ընդհանուր սկզբունքները:

**5.** Սույն գործի շրջանակներում սահմանադրական դադարանը հիմք ընդունելով նաև «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ եւ 9-րդ մասերի պահանջները, անհրաժեշտ է համարում պարզել եւ գնահապել.

ա/ Քաղաքացիական իրավունքների եւ պարագանությունների սահմանման, փոփոխման եւ դադարման հարաբերությունները կարգավորող իրավական ակտի պահանջվող գեսակը,

թ/ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող նորմում, ինչպես նաև գրավոր գործադրների նորարարական վավերացման գործող կարգում, մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների (այդ թվում՝ սեփականության) ու ազագությունների ապահովման եւ պաշտպանության, ազար իրականացման երաշխավորվածությունը, այդ իրավունքների ու ազագությունների սահմանափակումների թույլափրելիությունը,

գ/ վիճարկվող նորմի հետ համակարգային առումով փոխկապակցված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի այլ նորմերի դրույթների սահմանադրականությունը,

դ/ վիճարկվող նորմում դադարանին վերապահված լիազորության համապատասխանությունն արդարադաբության իրականացման՝ Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքային պահանջներին,

ե/ վիճարկվող նորմի մեկնարանման եւ կիրառման վերաբերյալ դադարական պրակտիկան:

**6. ՀՀ Սահմանադրության 3, 8, 14, 14.1., 18, 19, 31 եւ բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների եւ ազարտությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակերպային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարփառիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիահրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:**

ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածի 1-ին եւ 2-րդ կերպերի համաձայն՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում.

- Ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները եւ կարգը,

- Ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների եւ ազարտությունների սահմանափակումները, նրանց պարբականությունները, ինչպես նաև պատասխանափոխության դեսակները, չափերը, պարասահանարկության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմի պահանջների կարգարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի եւ այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային եւ այլ պարտավորությունների ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերը եւ կարգը:

Քաղաքացիական իրավունքներ եւ պարբականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն ուղղված՝ քաղաքացիների եւ իրավաբանական անձանց գործողություններն անմիջականորեն կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հիմքերորդ բաժնի 18-րդ գլխում ներառված նորմերով, այդ թվում նաև՝ սույն գործով վիճարկվող նորմեր պարունակող 289 եւ 300 հոդվածներով:

Անձանց իրավունքների իրականացման եւ պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների եւ պարբականությունների ծագման հիմքերը (10 հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները եւ պաշտպանության եղանակները (11, 12, 14, 16 հոդվածներ), գույքի նկարմամբ իրավունքների պետական գրանցման ընդհանուր կարգը (135 հոդված), սեփականության իրավունքի եւ այլ գույքային իրավունքների պաշտպանության եւ այդ իրավունքների դադարման կարգը (273-288 հոդվածներ), պարբավորության հասկացությունը, կողմերի պարբավորությունների կարգարումը (345-367 հոդվածներ), ինչպես նաև պարբավորությունների կարգարման ապահովման եւ դրանց խախտման դեպքում՝ պարասխանարկության կարգը, դեպքերը (24-րդ եւ 26-րդ գլուխներ):

Սույն գործով վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատելիս սահմանադրական դադարմանը ելնում է այդ նորմը պարունակող հոդվածի եւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոհիշյալ մյուս հոդվածների (նորմերի) իրավական բովանդակության համադրումից:

**7. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10 եւ 289 հոդվածների համաձայն՝ քաղաքացիական իրավունքների եւ պարբականությունների ծագման հիմք են օրենքով նախադասված պայմանագրերը եւ այլ գործարքներ, կամ այն գործողությունները, որոնք ուղղված են այդպիսի իրավունքներ եւ պարբականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն: Օրենսդիրը հսկակեցրել է քաղաքացիական իրավունքների ազատ իրացման շրջանակը (թույլափրեկի սահմանները), համաձայն որի՝ անձինք իրենց պարկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ, պայմանով, որ այդ իրավունքների իրականացումը չպետք է վնաս պարճառի այլ անձանց, հանրության եւ պետքության իրավունքներին ու օրինական շահերին:**

Վերոհիշյալ նորմերի բովանդակությունից հետևում է, որ քաղաքացիական հարաբերություններում անձի հայեցողական այդպիսի ազատ գործողությունների արդյունքում են ծագում, փոփոխվում եւ դադարում քաղաքացիական իրավունքներ եւ պարբականություններ, ինչը, քննության առարկայի շրջանակներում բխում է ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի 1-ին մասի եւ 42 հոդվածի 2-րդ մասի դրույթներից, հետեւաբար, սահմանադրական դադարմանը գրնում է, որ սույն գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289 հոդվածի սահմանադրականության վիճարկումը հիմնավոր չէ:

**8. Քաղաքացիական հարաբերություններում անձի հայեցողական ազա-  
փության եւ դրա՝ օրենքով նախանշված շրջանակներում իրականացնելու սկզբունքից  
է անմիջականորեն բխում պայմանագրերի եւ այլ գործարքների (բովանդակության,  
ձեւի) նկարմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախադեսված ինչպես ընդհա-  
նուր (289-317, 436-469 հոդվածներ), այնպես էլ հարուկ կանոնները, որոնցից է գրավոր  
ձեւով կնքվող գործարքների նորարական վավերացումը (234, 263, 562, 572,  
595, 610, 620, 678, 686, 959, 1203-1208, 1245 հոդվածներ): ՀՀ քաղաքացիական օրենս-  
գրքի 296 եւ 299 հոդվածների համաձայն՝ գործարքների նորարական վավերացումն  
ըստ ձեւի կարարվում է գործարքի բովանդակությունն արգահայտող եւ գործարք  
կնքող անձանց (կամ նրանց լիազոր ներկայացուցիչների) սպորագրությունները պա-  
րունակող փաստաթղթի վրա նորարի կամ նորարական գործողության կարարման  
իրավունք ունեցող պաշտոնագործ անձի կողմից վավերացնող մակագրությամբ: Ընդ  
որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 299 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործարք-  
ների նորարական վավերացումը պարբաղիր է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում  
նշված դեպքերում, կամ կողմերից որևէ մեկի պահանջով, իսկ օրենսգրքի 300  
հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքի նորարական ձեւը չպահպանելը հան-  
գեցնում է գործարքի անվավերության եւ առոչինչ է:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապարասիան նորմերի վերլուծությունը  
վկայում է, որ պարբաղիր նորարական վավերացման են ենթակա հիմնականում  
երկկողմ եւ բազմակողմ այն գրավոր գործարքները (պայմանագրերը), որոնք  
ուղղակիորեն առնչվում են անշարժ գույքի օբարման եւ այդ գույքի հավա-  
գարմագրային կառավարման հետ կապված իրավահարաբերությունների կարգա-  
վորմանը, իսկ այդ գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական  
գրանցման (ՀՀ քաղ. օր.-ի 301 հոդվածի 1-ին կետ), որպիսի պահանջը չպահպանելն  
օրենսգրքի 302 հոդվածի 2-րդ կետի համաձայն առաջացնում է օրենսգրքի 300  
հոդվածի 2-րդ կետում նախադեսված իրավակարգավորման միեւնույն միջոցների  
գործադրման հիմքեր եւ նույնային իրավական հետեւանքներ:

Փաստորեն, գործարքի նորարական վավերացման նախապայմանը վերա-  
բերում է այն դեպքերին, երբ անհրաժեշտ են իրավական լրացուցիչ միջոցներ՝  
պետական գրանցման ձեւով նախապես երաշխավորելու, հարկադաշտ՝ ՀՀ Սահմա-  
նադրության 31 հոդվածով նախադեսված սեփականության իրավունքի պաշտպան-  
ված իրականացումը (ՀՀ քաղ. օր.-ի 135, 301 հոդվածներ), ինչպես նաև պետության  
շահերի պաշտպանությունը:

Միաժամանակ, «Նոդարիափի մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի համաձայն՝ վավերացնելով փաստաթուղթը, նոդարը հաստափում է դրա օրինականությունը եւ հավասպում փաստաթուղթի լիարժեք ապացուցողական ուժը, որն ունի օրենքով նախադեսված հանրային հեղինակություն:

Փաստորեն, գրավոր գործարքի նոդարական վավերացմամբ, «Նոդարիափի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգի շրջանակներում նախապես անվիճելի են ճանաչվում իրավաբանական նշանակություն ունեցող այնպիսի փաստեր, ինչպիսիք են.

ա/ գրավոր ձեռով գործարքի կնքումը եւ դրա՝ օրենքով նախադեսված կարգի պահպանումը,

բ/ պայմանագրի կողմերի ինքնության հաստափումը, նրանց իրավազորությունը եւ ազատ կամաարդահայփությունը,

գ/ գործարքի պայմանների համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին եւ միջազգային պայմանագրերի դրույթներին, ինչպես նաև կողմերի իրական մբարդությանը:

Այսպիսով, գրավոր որոշ գործարքների նոդարական պարբադիր վավերացման ինսպիրութը եւ այդպիսի գործարքներից ծագող, փոփոխվող եւ դադարող իրավունքների պետական գրանցման օրենսդրական պահանջը՝ ելեկով նաև անձի իրավունքների եւ դրանց երաշխավորված իրացման վերաբերյալ սահմանադրական սկզբունքային դրույթների բովանդակությունից, քաղաքացիական իրավունքների իրականացման ազագության որոշակի սահմանափակում նախադեսելով հանդերձ, կարեւոր երաշխիք է ինչպես անձանց իրավունքների (ներառյալ սեփականության իրավունքի) արդյունավետ իրացումն ու պաշտպանությունն ապահովելու, այնպես էլ պայմանագրի կողմերի սպանձնած պարբավորությունների քարեխիղճ կապարման, հետեւաբար, նաև քաղաքացիական (գույքային) շրջանառության երաշխավորված կայունությունն ապահովելու համար:

Սահմանադրական դադարանը, միաժամանակ արձանագրում է, որ գործի նյութերի համաձայն կողմերի միջև կնքվել է ոչ թե առուվաճառքի, այլ՝ փոխառության պայմանագիր, որը պայմանագրային հարաբերությունների այլ ինսպիրութ է եւ կարգավորվում է քաղաքացիական օրենսգրքի 46 գլխի նորմերով:

**9. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածում պարունակվող բառերի եւ արդարականացման մեջ նշանակությամբ մեկնաբանությունից բխում է, որ գրավոր գործարքով պայմանավորված անձանց քաղաքացիական իրավունքների**

ազար իրականացման եւ սահմանադրորեն ամրագրված սկզբունքներով դրանց պաշտպանությունը երաշխավորելու համար, օրենսդիրն անհրաժեշտ է համարել հասպարագրել որոշակի փասթերի իրավաբանական նշանակությունը եւ դրանց առկայությամբ պայմանավորված իրավակարգավորման համապատասխան միջոցներ ու կառուցակարգային լուծումներ: Այդպիսիք են.

- գործարքի նորարարական ձեւը չպահպանելը եւ դրա իրավական հետեւանքը,
- նորարարական վավերացում պահանջող գործարքը կողմերից մեկի կողմից մասնակի կամ լրիվ կարգարելը եւ նորարարական վավերացումից մյուսի խուսափելը, այդ դեպքում քաղաքացիական իրավունքների պաշտպանության միջոցը,
- դարպարանի լիազորություն՝ գործարքը կարգարած կողմի պահանջի դեպքում,
- գործարքը դարպարական կարգով վավեր ճանաչելը եւ դրա իրավական հետեւանքը,
- գործարքի նորարարական վավերացումից խուսափող կողմի պարասխանագույթյունը (պարփակությունները) մյուս կողմի առջեւ՝ կապված գործարքի կնքման ուշացման հետ:

Սահմանելով գրավոր որոշ գործարքների նորարարական վավերացման պարփակիր պայման, օրենսդիրը միաժամանակ հսկակեցրել է այդ պայմանի խախտման իրավական հետեւանքները, ինչպես նաև խախտված քաղաքացիական իրավունքների պաշտպանության համապատասխան միջոցը: Տվյալ դեպքում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի համաձայն գրավոր գործարքի նորարարական վավերացման օրենսդրական պահանջի կարգումից կողմի խուսափելն այն դեպքում, եթք մյուս կողմը լրիվ կամ մասնակի կարգարել է այդ գործարքի պայմանները, վերջինիս համար հիմք են խախտված իրավունքները դարպարական կարգով պաշտպանելու սահմանադրական իր իրավունքն իրացնելու, իսկ դարպարանին՝ իր հայեցողական լիազորության շրջանակներում վավեր ճանաչելու գործարքը, որի արդյունքում գործարքի հետագա նորարարական վավերացում չի պահանջվում:

Փաստորեն, խոսքը վերաբերում է ոչ թե պայմանագրային պարփակության կարգումից կողմի՝ օրենքով նախադրեաված կարգով հրաժարվելու ինսդիվուլֆին, այլ՝ սահմանված կարգով իրավաչափ գործողություն կարգարելուց խուսափելուն:

**10. Սույն գործով դիմումի առարկայի շրջանակներում քաղաքացիական իրավունքների եւ պարփականությունների ծագման, դրանց իրականացման, գործարքների (պայմանագրերի) կնքման, կարգարման ու խախտված իրավունքների պաշտպանության, դրա հետ կապված վեճերով դարպարական հայեցողական լիազորության**

իրավաչափի շրջանակների, ՌՌ քաղաքացիական օրենսգրքի նորմերի, ինչպես նաև ՌՌ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի դադարական մեկնաբանման, ինչպես նաև միջազգային իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունից հետեւում է, որ լուծելով նորարական վավերացում պահանջող գործարքը վավեր ճանաչելու վերաբերյալ վեճ, յուրաքանչյուր դեպքում դադարանի խնդիրն է պարզել.

- գործարքի օրինականությունը (իրավաչափությունը), գրավոր ձեւի պահպանման փասդը,

- գործարքի նորարական ձեւը չպահպանելը եւ մեղավոր կողմին,

- գործարքի նորարական վավերացումից կողմի խուսափելը (գործողությամբ կամ անզործությամբ) եւ դրա հիմքերը,

- նորարական վավերացում պահանջող գործարքը կողմերից մեկի լրիվ կամ մասնակի կադարելու փասդը եւ դրա օրինականությունը (իրավաչափությունը): Հնդ որում, գրավոր գործարքի փասդացի (մասնակի) կադարման հանգամանքի իրավական նշանակությունը դադարանների կողմից համանման քաղաքացիական վեճեր լուծելիս, կարեւորված է նաև ՌՌ դադարանների նախագահների խորհրդի՝ 2001թ. սեպտեմբերի 26-ի թիվ 43 որոշմամբ:

Ինչպես վկայում է Մարդու իրավունքների եվրոպական դադարանի իրավակիրառական պրակտիկան՝ կապված անձանց գույքային իրավունքների իրականացման բնագավառում պետության միջամբության թույլադրելիության շրջանակների հետ, ապա այդպիսին իրավաչափի է գնահատվում, եթե.

- իրականացվում է օրենքին համապատասխան,

- պայմանավորված է հանրային շահերով,

- ապահովում է մասնավոր եւ հանրային շահերի հավասարակշռություն:

Սույն գործի շրջանակներում գնահատելով ՌՌ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի սահմանադրականությունը, սահմանադրական դադարանն արձանագրում է, որ ցանկացած բնույթի՝ ներառյալ նորարական վավերացում պահանջող գործարքների հետ կապված քաղաքացիական վեճեր քննելիս, դադարանը՝ որպես պետական մարմին պարբառված է, առաջնորդվելով ՌՌ Սահմանադրությամբ, այդ վեճերը լուծել օրենքին համապատասխան, միաժամանակ անխուսափելիորեն պաշտպանելով ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային ու պետական շահերը:

Այսպիսով, սահմանադրական դադարանը գիրնում է, որ օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետն իր բովանդակությամբ, կիրառման պրակտիկայով եւ օրենսգրքի այլ նորմերի հետ ունեցած համակարգային փոխկապակցվածությամբ, երաշխավորում է

նոդարական վավերացման ենթակա գործարքների կնքման ու կադարման հետ կապված հարաբերությունների (այդ թվում՝ սեփականության իրավունքի) կարգավորման իրավաչափ միջոցների գործադրման, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 3, 8, 14, 14.1., 18, 19, 31 եւ այլ հոդվածներով նախարեսված ու միջազգային իրավակիրառական պրակտիկայում հասպարագրված սկզբունքներով՝ անձի խախտված իրավունքների դադարական պաշտպանության հնարավորություն:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դադարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դադարանը **ՈՐՈՇԵՅՑ**.

1. «Քաղաքացիներ Ա. Սաֆարյանի եւ Ռ. Շակոբյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դադարական գործադրության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դադարական գործադրության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի մասով՝ կարճել:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 289 հոդվածի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

## **ՆԱԽԱԳԱՌՈՂ**

15 մայիսի 2007 թվականի  
ՍԴՈ-702

## **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**